ԿԱՐԾԻՔ

Լիանա Սերժիկի Արզումանյանի «ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ-ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆԸ» ԺԳ.00.02 - «Դասավանդման եվ ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտացմամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին:

Անգլերենի բժշկական բառապաշարի և հաղորդակցության կարողունակությունների զարգացումը ժամանակի անժխտելի պահանջ է դարձել, և այն պետք է իրականացվի համապատասխան ռազմավարության մշակմամբ և ուսումնական գործընթացում դրա ներդրմամբ, ինչն առավել արագ, դյուրին և արդյունավետ կդարձնի յուրաքանչյուր նոր օտար լեզվի ուսուցման գործընթացը:

Այսպիսով, հետազոտության արդիականությունը պայմանավորված է ՀՀ բուհերում ուսանողների անգլերենի բժշկական բառապաշարի և հաղորդակցական կարողունակությունների զարգացման անհրաժեշտությամբ:

Կարևորելով թեմայի արդիականությունը՝ փորձ է արվել բարելավել բժշկական բառապաշարի օպտիմալացման ուղիները, որն օտար լեզվի հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորման և զարգացման պայման է:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ օտար լեզուների ուսուցումը բժշկական բուհերում մասնագիտական կրթության անբաժանելի մասն է: Մասնագիտական լեզվի գործնական իմացությունը՝ ըստ ուսումնական պլանի, ենթադրում է մասնագիտական տեղեկատվություն ստանալու նպատակով օտար լեզվով գիտական գրականության հետ ինքնուրույն աշխատելու, ինչպես նաև մասնագիտական տարբեր թեմաներով զրույց վարելու կարողություն: Ուսումնական գործընթացի դիտարկումները ցույց են տալիս, որ ուսանողներն ունեն անգլերեն բժշկական բառապաշարի հիմնականում ցածր մակարդակ, որն իր հերթին, հանգեցնում է ոչ արդյունավետ հաղորդակցման գործընթացի:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է ՀՀ բուհերում ուսանողների անգլերենի բժշկական բառապաշարի և հաղորդակցական կարողունակությունների զարգացման անհրաժեշտությամբ:

Կարևորելով թեմայի արդիականությունը՝ փորձ է արվել բարելավել բժշկական բառապաշարի օպտիմալացման ուղիները, որն օտար լեզվի հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորման և զարգացման պայման է:

Հետազոտության գիտական նորույթը հաստատվում է հետազոտության ընթացքում և արդյունքում:

Լիանա Արզումանյանը նշում է, որ եթե Եթե բժշկական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգի մշակման համար կիրառենք ճանաչողական-հաղորդակցական, հասկացութային մոտեցումները, ապա կբարձրանա բժիշկ-ուսանողների հաղորդակցական կոմպետենցիայի զարգացման գործընթացի արդյունավետությունը:

Այս առաջադիր վարկածը ամբողջովին հաստատված է կատարված հետազոտության արդյունքներով:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքը պարունակում է աղյուսակներ և գծապատկերներ:

Ատենախոսության **առաջին գլխում՝ «Ուսանողների հաղորդակցական կոմպետենտության զարգացման հիմնախնդիրը բժշկական համալսարանում»** վերնագրով, որը բաղկացած է երեք ենթագլխից, քննության էն առնվում բժիշկ-ուսանողների շրջանում հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորման և զարգացման գործընթացը: Առաջին ենթագլխում՝ **«Հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորման առանձնահատկությունները EMP- դասընթացում»** վերնագրով, ներկայացվում են հաղորդակցական կոմպետենտության հիմնական բաղադրիչները՝ լեզվական, հանրալեզվաբանական, խոսույթային, ռազմավարական, սոցիալական կոմպետենցիաները: Վերլուծվում են այն սկզբունքները, որոնց միջոցով իրականացվում է ճանաչողական-հաղորդակցական մոտեցումը:

Հաշվի առնելով EMP (English for Medical Purposes) դասընթացի հիմնական նպատակներն ու խնդիրները՝ հստակեցվել են բժշկական բառապաշարի դասավանդման սկզբունքներն ու ռազմավարությունները:

Երկրորդ ենթագլխում՝ **«Բժշկական բառապաշար սովորելու հաղորդակցական-ճանաչողական մոտեցումը»** վերնագրով, բացահայտվում են բժշկական ակտիվ և պասիվ բառապաշարի առանձնահատկությունները՝ համեմատական կտրվածքով ընկալողական, վերարտադրողական և արտադրողական բժշկական բառապաշարը:

Հաղորդակցական մոտեցման շրջանակներում նպատակահարմար է օգտագործել ուսանողների «ակտիվ գիտակցության» օտարալեզու բառային նյութի ձեռքբերման և մտապահման ռազմավարությունը: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է օգնել ուսանողներին, որպեսզի հնարավորինս արդյունավետ լինի նրանց կողմից բառապաշարային միավորների յուրացման գործընթացը:

Երկրորդ գլուխը՝ «Անգլերեն բժշկական բառապաշարի ուսուցման ինտերակտիվ մեթոդները» վերնագրով, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Անգլերեն բժշկական բառապաշարի ճանաչողական-հաղորդակցական ռազմավարությունները»** վերնագրով, քննության են առնվում «ռազմավարություն» հասկացությունը, ճանաչողական ռազմավարության նպատակը, վերլուծվում են հաղորդակցման ռազմավարությունները EMP դասընթացում:

Երկրորդ ենթագլխում՝ **«Անգլերեն բժշկական բառապաշարի դասավանդման ինտերակտիվ մեթոդներն ու հնարները»** վերնագրով, սահմանվում են բժշկական բառապաշարի ինտերակտիվ դասավանդման նպատակը, մասնագիտական կողմնորոշման բառապաշարի ճանաչողական-հաղորդակցական ուսուցման սկզբունքները, ընդհանուր առմամբ ներկայացված են ապագա բժշկական ուսանողների ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաները: Քննության են առնվել որոշ ինտերակտիվ մեթոդներ՝ քննարկում, նախագծի մեթոդ, դեպքերի ուսումնասիրություն, խմբային աշխատանք, քվեստ, վիկտորինա, դերային խաղեր, բլից հարցման մեթոդ, որոնց կիրառումը ենթադրում է՝ ուսանողի ակտիվություն անգլերենի բժշկական բառապաշարի յուրացման գործընթացում: Նախագծի մեթոդը

համարվում է դասախոսի և ուսանողների կողմից հատուկ կազմակերպված ինքնուրույն գործողությունների մի շարք, որոնք թույլ են տալիս լուծում գտնել կոնկրետ խնդրի (գիտական, գործնական, ստեղծագործական, կենսական) շրջանակներում և ստեղծել որոշակի արտադրանք (նյութական կամ մտավոր): Նախագծի թեման սովորաբար խնդրահարույց բնույթ է կրում և չի ենթադրում մեկ ճիշտ լուծման առկայություն:

Բժշկական բառապաշարի ինտերակտիվ ուսուցման համատեքստում առաջին պլան են մղվում «Ինտերվյու» («Interview»), «Խճանկար» («Jigsaw»), «Ձնագունդ» («Snowball»), մոդելավորման հնար, դերային խաղեր մեթոդները: Կարևորվում է նաև քննարկումների մեթոդը, որը ներառում է բանավեճեր, կլոր սեղաններ, մտագրոհ, ասուլիս և կոնֆերանս: Երրորդ ենթագլխում՝ **«Անգլերեն բժշկական բառապաշարի դասավանդման մեթոդական համակարգի արդյունավետության հիմնավորումը ճանաչողական-«հաղորդակցական մոտեցման տեսանկյունից»** ներկայացվում է փորձարարական ուսուցման ընթացքը և արդյունքները, որն իրականացվել է Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում՝ փորձարարական ուսուցման ընթացքում: Ատենախոսության հիմնական դրույթները փորձի տարբեր փուլերում քննարկվել են Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի օտար լեզուների ամբիոնի և Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հանդիպումներին:

Ձևակերպվել է փորձարարական ուսուցման նպատակը, այն է՝ խոսակցական բժշկական բառապաշարի ուսուցումը: Փորձարարական ուսուցման գործընթացում ընդգծվում է բառային միավորների սկզբնական մշակման ռազմավարության կարևորությունը, նույնականացման ռազմավարությունը, որը հիմնված է տեքստում անհայտ բառային միավորների որոնման մարտավարության և բառարանի (բառարան-թեզավրուս, սեփական բառարան, տարբեր էլեկտրոնային բառարաններ) օգտագործման մարտավարության վրա:

Լիանա Արզումանյանը աշխատանքի ընթացքում օգտագործվել է լեզվական, ընկալողական և վերլուծական վարժություններ: Հիմք ընդունելով, թե ինչ բառապաշարային հմտություններ և կարողություններ են ձևավորվում, պարզվել է

այն հիմնական հմտությունները, որոնք պետք է ձևավորվեն բժշկական բառապաշարի ուսուցման արդյունքում:

Ընդհանուր առմամբ, փորձարարական խմբի ուսանողներն ավելի լավ արդյունքներ են գրանցել ուսուցման ավարտին, քան ստուգողական խմբի ուսանողները: Դա բացատրվում է առաջին հերթին նրանով, որ բացի ուսումնական լեզվական վարժություններից, կատարել են ճանաչողական-հաղորդակցական մոտեցման տեսանկյունից մշակված վարժություններ: Ընդգծվել է վարժությունների իմաստային-զուգորդական և հաղորդակցական բնույթը: Փորձարարական ուսուցման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ընկալողական և վերարտադրողական բառապաշարի միաժամանակյա զարգացումը փորձարարական խմբի ուսանողների մոտ առավել արդյունավետ է դարձնում առաջադրանքների կատարումը:

Փորձարարական ուսուցման վերջին՝ ավարտական փուլում բժիշկ-ուսանողներին դասավանդվում է մասնագիտական, հատուկ բառապաշար: Ընդհանուր առմամբ, փորձարարական ուսուցման առաջնային խնդիրը մասնագիտական խոսքում բժշկական բառապաշարի զարգացումն է: Փորձարարական ուսուցումն իրականացվել է դեղագիտության ֆակուլտետում:

Արտադրողական բժշկական բառապաշար մշակելու համար ատենախոսը օգտագործել է խոսքային, արտադրողական, հաղորդակցական և հետազոտական վարժություններ:

Կիրառվել է հաղորդակցական ռազմավարությունը ըստ որի՝ տեղի է ունենում խոսքի աշխատանքի պլանավորում: Բառապաշարի միավորների ընտրությունն իրականացվում է իրավիճակային համատեքստին համապատասխան՝ խոսքային ստեղծագործական բառապաշարի լրացման մարտավարության կիրառմամբ:

Չորրորդ վերահսկման և շտկման փուլում ձեռք բերված արդյունքը փոխկապակցվում է առաջադրված հաղորդակցական առաջադրանքի հետ, որոշվում է օգտագործվող բառային միավորների համապատասխանությունը տվյալ իրավիճակային համատեքստին, ստուգվում է համապատասխանությունը բառապաշարային և քերականական նորմերին:

Աշխատանքը փորձարկվել է Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում՝ փորձարարական ուսուցման ընթացքում: Փորձարարական աշխատանքին մասնակցել է 210 ուսանող: Ատենախոսության հիմնական դրույթները փորձի տարբեր փուլերում քննարկվել են Երևանի Մ. Հերացու անվան պետականբժշկական համալսարանի օտար լեզուների ամբիոնի և Վ. Բրյուսովի անվան պետականհամալսարանի մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հանդիպումներին:

Դրա հետ մեկտեղ կարելի է ներակայացնել որոշ դիտարկումներ, որոնք հետագայում կարող են բարելավել հետազոտության որակը:

1. Ցանկալի կլիներ հստակեցնել օգտագործված տերմինաբանությունը և ապահովել հիմնական հասկացությունների միասնական կիրառումը ամբողջ աշխատանքի ընթացքում՝ խուսափելով հնարավոր բազմիմաստություններից և ոճական անհամապատասխանություններից, ինչը կուժեղացներ աշխատանքի գիտական և գործնական արժեքը:
2. Աշխատանքը կարող էր շահել, եթե ավելացվեին համեմատական վերլուծություն ավանդական և ճանաչողական-հաղորդակցական մոտեցումների միջև՝ ընդգծելով վերջինիս առավելությունները բժշկական մասնագիտական բառապաշարի ուսուցման համատեքստում:
3. Առաջարկվում է ընդլայնել օգտագործված աղբյուրների շրջանակը՝ ներառելով ավելի նոր միջազգային հետազոտություններ և մեթոդական հրապարակումներ, ինչը կնպաստի աշխատանքի տեսական հենքի ամրապնդմանը և արդիականությանը
4. Աշխատանքում առկա են տեխնիկական վրիպակներ և սպրդումներ, որոնք վերանայման կարիք են զգում:

Այսպիսով, կարելի է նշել, որ ատենախոսը իրականացրել է համապարփակ հետազոտություն՝ ներառելով թե՛ գրականության վերլուծություն, թե՛ փորձարարական տվյալների հավաքագրում և վերլուծություն, ինչը բարձրացնում է աշխատանքի գիտական արժեքը և կիրառական նշանակությունը:

Ընդհանուր առմամբ ատենախոսությունը համապատասխանում է գիտական աշխատանքի պահանջներին, ունի տեսական և կիրառական արժեք, և կարող է օգտակար լինել ինչպես ուսանողների ու դասախոսների, այնպես էլ բժշկական ոլորտի մասնագետների համար: Ներկայացված ատենախոսությունը կարելի է գնահատել որպես գիտականորեն հիմնավորված և գործնական կիրառման համար կարևոր ուսումնասիրություն: Դրական է նաև այն, որ հրատարակված հոդվածները և սեղմագիրը համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:

Եզրակացություն

Լիանա Սերժիկի Արզումանյանի **«Ճանաչողական-հաղորդակցական մոտեցումը բժշկական մասնագիտական անգլերեն բառապաշարի ուսուցմանը»** ատենախոսությունը ամբողջական, գիտական ու լեզվական բարձր մակարդակով իրականացված հետազոտություն է: Այն լիովին համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, բավարարում է ԲԿԳԿ-ի կողմից մանկավարժական գիտությունների թեկնածուի /ԺԳ.00.02 թվանիշով/ գիտական աստիճանին ներկայացվող ժամանակակից պահանջները, որն էլ հիմք է տալիս միջնորդելու ՀՊՄՀ-ում գործող՝ գիտական աստիճաններ շնորհող 020 մասնագիտական խորհրդի առջև նրա հեղինակին շնորհելու իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Ընդդիմախոս՝ մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, Մ. Ա. Դարաբյան

Մ.գ.թ., դոցենտ Մ. Ա. Դարաբյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի
գիտական քարտուղար՝ մ.գ.թ., դոցենտ, Հ. Վ. Թադևոսյան

12.01.2026